REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF CULTURE
<<CULTURAL PROJECTS
IMPLEMENTATION UNIT>>
STATE AGENCY

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО КУЛЬТУРЫ
<<БЮРО ПО РЕАЛИЗАЦИИ
КУЛЬТУРНЫХ ПРОГРАММ>>
ГОСУДАРСТВЕННОЕ
УЧРЕЖДЕНИЕ

10.03.14 թ N 79-14

Ձեր N______ առ ___________

ՀՀ, ք. Երևան, 0010 Հանրապետության հրապարակ, Կառավարական 3 շենք
РА. Ереван, 0010 площадь Республики, дом правительства N3
Government Building N 3, Republic square, 0010, Yerevan, Republic of Armenia
Tel:(+37410) 58 51 96, 58 51 78 , Fax:(+37410) 585196 E-mail: cultproject@mail.ru

**«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/6» ծածկագրով**
**շրջանակային համաձայնագրերի միջոցով**
**գնում կատարելու ընթացակարգի հնարավոր**
**մասնակիցների ղեկավարներին**

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/6» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ծառայություն՝ **Իրավական խորհրդատվական և տեղեկատվական ծառայություններ**:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում N **«ՀՀՄՆՄԾԻԳ- ՇՀԾՁԲ -14/61»:**

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով մինչև **2014 թ. մարտի 20-ին**, **ժամը 15:00**:

Հայտերը կբացվեն www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով **2014 թ. մարտի 20-ին, ժամը** 15:00: Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը /հավելված N 1 և N 2/: Ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը կայքի միջոցով ներկայացնում է հայտ : Հայտին կցվում են սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը / հավելվածներ/ ՝ հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված /սկանավորված /տարբերակով:

Մասնակիցը Հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

-«**Պիտանելիության չափորոշիչ**».

ընթացակարգին մասնակցելու դիմում՝ / Հավելված N 1/,ըստ որում պարտադիր է նշել մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն:

-«**ֆինանսական չափորոշիչ**».

գնային առաջարկ /Հավելված N 2/, որը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով մեկ թվով՝ և **կայքում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և չեն ներկայացվում**:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/6» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և / կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և / կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և / կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը:Ընդ որում՝

-նման փաստաթղթերի և / կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցմամբ)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և / կամ տվյալները:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և գնային առաջարկով ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

**Տնօրենի պաշտոնակատար** **Ե. ԽԵՐԱՆՅԱՆ**